MA-SIS

ՄԱ-ՍԻՍ

N° 9

Gazette des Arméniens de Lille, juillet 2010 – janvier 2011

Լիլահայ համայնքի պարբերական, հուլիս 2010 – հունվար 2011

FÊTE DE LA FIN DE L'ANNÉE SCOLAIRE

Le 3 juillet 2010, nous avons fêté la fin de l'année scolaire et le début des grandes vacances avec les enfants qui ont suivi les cours d'arménien. Nous avons utilisé une jolie salle des fêtes et son grand parc, allée du Trocadéro à Mons en Barœul.

En toute simplicité, nous avons pu remercier tous ceux qui ont donné des cours pendant cette année et les efforts des enfants. Des souvenirs ont été offerts aux infatigables professeurs bénévoles : Susanna Mughnetsyan, Haïk et Gohar Gambarian. Sira-nouche et Louciné Babikian, en vacances, n'ont malheureusement pu se joindre à nous. Pour cette fin d'année, Angela et Samvel ont spécialement conçu pour les enfants de beaux tee-shirts illustrant les lettres de l'alphabet arménien. Les enfants ont pu les porter avec

GoharGambarian, Susanna Mugnetsyan et Haik Gambarian avec les enfants
Գոհար Ղամբարյանը, Սուսաննա Մուղնեցյանը և Հայկ Ղամբարյանը՝ երեխաների հետ

La photo de souvenir des participants de la fête de fin d'année
Տարեվերջյան միջոցառման մասնակիցների խմբակային հուշ-լուսանկարը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

2010 թ. հուլիսի 3-ին հայերենի դասընթացներ հաճախող երեխաների հետ նշեցինք ուսումնական տարվա ավարտը և ամառային արձակուրդների սկիզբը: Անս նպատակով մենք վարձել էինք Մոնս ան Բարոլ քաղաքի Տրոկադերոյի ծառուղում գտնվող գեղեցիկ հանդիսությունների դահլիճը՝ իրեն հարակից այգով:

Մենք հնարավորություն ունեցանք համեստորեն շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր տարվա ընթացքում դասավանդել են և, իհարկե, երեխաներին՝ իրենց գործադրած ջանքերի համար: Հուշանվերներ հանձնվեցին անխոնջ կամավոր դասատուներին՝ Սուսաննա Մուղնեցյանին, Հայկ և Գոհար Ղամբարյաններին: Արձակուրդ գնալու պատճառով՝ Սիրանուշ և Լուսինե Բաբիկյանները, ցավոք, հնարավորություն չունեցան ներկա լինել: Ուսումնական տարվա այս ավարտի համար Սամվելն ու Անժելան, հատուկ աշակերտների համար, հայոց այբուբենի տառերով ձևավորել էին կիսաթև շապիկներ, որոնք երեխաները մեծ հաճույքով հագան: Ուստի շնորհակալություն

La remise des souvenirs aux enseignants lors du goûter, devenu traditionnel
Հուշանվերների հանձնումը՝ ավանդական դարձած համտեսման ժամանակ

plaisir. Merci donc aux créateurs pour leur implication. Cette fête de fin d'année s'est terminée par un goûter préparé par les mamans. Comme toute fête arménienne, elle a été accompagnée de musique et de danse.

Avec regret nous avons appris quelque temps après que Susanna Mughnetsyan ne reprendrait plus ses cours avec les enfants à cause de son déménagement. Celui-ci l'éloigne de nous mais la rapproche de sa famille. Encore une fois merci à elle pour sa contribution au fonctionnement des cours d'arménien.

Louisette Lamarche

DES COURS DE FRANÇAIS POUR LES ADULTES

Depuis mars 2010, Tatévik, Nariné et Garik ont organisé des cours de français pour les Arméniens et, majoritairement, les Arméniennes. Tous ont pour la plupart déjà assisté à de tels cours donnés par des associations françaises. Mais, comme l'explique Nariné et Tatévik, seuls des Arméniens peuvent faire la comparaison des langues et savoir ce qui pose le plus de problème pour eux. C'est le cas, par exemple, des articles dont l'emploi est assez restreint en arménien. Les genres (masculin et féminin) et les prépositions posent également des difficultés. Cela est dû au fait que le français est une langue analytique, tandis que l'arménien est synthétique.

Nariné enseigne la grammaire, Tatévik le vocabulaire et la pratique de la langue. Garik a donné quelques cours sur la rédaction de différents écrits : lettre de motivation, démarches administratives, etc. La difficulté pour nos professeurs est de s'adapter aux différents niveaux en français des participants et à la fréquentation irrégulière de certains. Les motivations sont pour tous de s'insérer mieux dans la société et de gagner en autonomie. La convivialité est également un des moteurs de la participation. Il a également été évoqué la possibilité de donner des cours de français tournés vers l'apprentissage du Code de la route pour ceux qui en avaient besoin. Il a été décidé de reconduire ces cours pour l'année scolaire suivante.

Louisette Lamarche

INVITATION DE LA PART DU *SECOURS POPULAIRE DU NORD*

Depuis 2005, à Gravelines, le Secours populaire du Nord et ses partenaires organisent l'accueil des participants du mouvement d'enfants « Copains du monde ». Cette année, près de 90 enfants venus de Turquie, de Pologne, du Sahara occidental, de Géorgie, d'Ingouchie, de Palestine, du Liban, d'Arménie et de France ont été accueillis dans un Centre international de vacances. Les trois semaines de manifestations d'échange et de solidarité ont débuté le 2 août.

La musique et la danse ont pris une solide place dans le programme de la soirée
Երեկոյի ընթացքում անընդհատ հնչում էր երաժշտությունն ու թևածում պարը

ենք հայտնում նրանց՝ իրենց ունեցած ներդրման համար: Այս միջոցառումն ավարտվեց երեխաների մայրերի պատրաստած ուտեստների համտեսումով: Ինչպես բոլոր հայկական տոները, սա էլ համեմվեց երգ ու պարով:

Մի քիչ ավելի ուշ ափսոսանքով իմացանք, որ Սուսաննա Մուղնեցյանն այլևս հնարավորություն չի ունենա դասավանդելու՝ ուրիշ բնակության վայր տեղափոխվելու պատճառով: Այս հանգամանքը նրան հեռացնում է մեզանից, բայց մոտեցնում իր ընտանիքին: Կրկին անգամ շնորհակալություն ենք հայտնում նրան՝ հայերենի դասավանդման գործում ունեցած ավանդի համար:

Լուիզեթ Լամարշ

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2010 թ. մարտ ամսից սկսած Տաթևիկը, Նարինեն և Գարիկը կազմակերպում են ֆրանսերենի դասընթացներ՝ հայերի և, հատկապես, հայ կանանց համար, որոնց մեծ մասն արդեն հաճախել է ֆրանսիական կազմակերպությունների կողմից տրվող նմանատիպ դասերի: Սակայն, ինչպես Նարինեն ու Տաթևիկն են բացատրում, միայն հայերը կարող են լեզվական համեմատություններ անել և իմանալ, թե որո՞նք են հիմնական դժվարությունները նրանց ուսուցման ժամանակ: Դրանք մասնավորապես վերաբերվում են հայերենում շատ նեղ գործածություն ունեցող հոդերին: Սեռերը (արական և իգական) և նախդիրները նույնպես առաջացնում են բարդություններ: Դա գալիս է նրանից, որ ֆրանսերենն անալիտիկ լեզու է, իսկ հայերենը՝ սինթետիկ:

Նարինեն դասավանդում է քերականություն, Տաթևիկն աշխատում է բառապաշարի և խոսակցական ֆրանսերենի վրա: Գարիկը վարել է միայն մի քանի դաս՝ նվիրված գրավոր շարադրանքներին, տարբեր վարչական դիմումների ձևերին և այլն: Մեր դասատուների հիմնական դժվարությունը կապված է սովորողների ֆրանսերենի իմացության տարբեր մակարդակների հետ հարմարվելու և նրանց մի մասի կանոնավոր հաճախումների հետ: Մասնակիցների հետապնդած նպատակը հասարակության մեջ ինտեգրվելը և ինքնուրույնություն ձեռք բերելն է: Դասերին մասնակցելու հիմնական պատճառներից են նաև մարդկային հաճելի և ջերմ շփումները: Նաև հարց է բարձրացվել հնարավորության դեպքում կազմակերպել ֆրանսերենի դասընթացներ՝ ուղղված ճանապարհային երթևեկության կանոնների սովորելուն՝ դրա կարիքը ունեցողների համար: Հաջորդ ուսումնական տարում որոշվել է չդադարեցնել նմանատիպ պարապմունքները:

Լուիզեթ Լամարշ

ՀՐԱՎԵՐՔ «ՆՈՐԴԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԿՈՂՄԻՑ

Սկսած 2005 թ.՝ Գրավլինում, «Նորդի համազգային օգնություն» կազմակերպությունն իր գործընկերների հետ հյուրընկալում է «Բարեկամներ՝ աշխարհով մեկ» մանկական շարժման մասնակիցներին:

Այս տարի մոտ 90 երեխաներ եկել էին Թուրքիայից, Լեհաստանից, Արևմտյան Սահարայից, Վրաստանից, Ինգուշեթիայից, Պաղեստինից, Լիբանանից, Հայաստանից և Ֆրանսիայից: Նրանք հյուրընկալվել էին «Արձակուրդների միջազգային կենտրոնում»: Փոխըմբռնման և համերաշխության միջոցառումների շարքը սկսվել է օգոստոսի 2-ին և տևել երեք շաբաթ:

Միջոցառումների ծրագրի մեջ առաջին անգամ էր, որ մշակույթը, հատկապես երաժշտությունն ու պարը, զբաղեցնում էր իր ուրույն տեղը: Օգոստոսի 16-ին, Լուն-Պլաժ քաղաքի երաժշտական դպրոցում տեղի ունեցավ պարային և երաժշտական բազմամշակութային ներկայացում, որին մաս-

Pour la première fois, la culture, notamment la musique et la danse, ont pris une solide place dans le programme des manifestations. Le 16 août, à l'école de musique de Loon-Plage, un spectacle de danse et de chants a été organisé avec la participation des jeunes de différents pays et de différentes cultures. Trois de nos enfants ont présenté les danses armé-niennes : Sona et Emma ont interprété la gracieuse « Tavir » (la harpe) et Toros le « Chalakho ». Une autre Arménienne, Astrik Maloumian, installée depuis 2010 à Grande-Synthe, s'est produite au piano devant les Copains du monde, son premier public en France. Avec le directeur de l'école de musique Philippe Oprandi au tuba, elle a notamment interprété le con-certo du compositeur arménien Alexandre Haroutiounyan.

Sona et Emma ont interprété la gracieuse « Tavir »
Սոնան և Էմման կատարեցին հեզաճկուն «Տավիղ» պարը

Le 19 août, le *Secours populaire* a invité les enfants arméniens à représenter l'Arménie à Paris, lors de la Journée euro-péenne des oubliés des vacances. C'était une journée exceptionnelle qui avait rassemblé sur le Champ de Mars, à proximité de la Tour Eiffel, plusieurs milliers d'enfants en provenance de 25 pays dont 100 éclaireurs/copains du monde du rassemblement de Gravelines.

Sur la vaste aire du Champ de Mars, à côté des représentants de différents pays, quelques membres de l'association *Ararat* ont ouvert un stand arménien permettant aux visiteurs de découvrir la culture arménienne et les spécialités culinaires nationales. Pour fi-nir, nos enfants ont une nouvelle fois interprété la danse armé-nienne avec les costumes traditionnels. Sona et Emma se sou-viennent : « Le jour de la première représentation de notre danse traditionnelle, nous avons eu un sentiment de peur et d'angoisse, mais quand nous nous sommes habillées, nous étions très contentes. Une fois sur scène, tout s'est passé comme sur des roulettes ».

Garik Galstyan

Sur le Champ de Mars, les membres d'*Ararat* ont ouvert un stand arménien
Մարսի Դաշտում «Արարատ»ի անդամները բացել էին հայկական տաղավար

նակցեցին տարբեր երկրներից ժամանած երեխաներ: Երեք հայ երեխա ներկայացրեցին մեր հայկական պարը. Սոնան և Էմման պարեցին հեզաճկուն «Տավիղը», իսկ Թորոսը՝ «Շալախո»ն: Մեկ ուրիշ հայուհի, Աստղիկ Մալումյանը, ով 2010 թ. բնակություն է հաստատել Գրանդ-Սենթում, դաշնա-մուր նվագեց «Բարեկամներ՝ աշխարհով մեկ» մանկական շարժման մասնակիցների համար: Ի դեպ, սա նրա առաջին համերգն էր Ֆրանսիայում: Երաժշտական դպրոցի տնօրեն Ֆիլիպ Օպրանդիի (շեփոր) հետ նա մասնավորապես կատարեց հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի կոնցերտոն:

Quant à Toros, il a interprété le « Chalakho » / Իսկ Թորոսը պարեց «Շալախո»ն

Օգոստոսի 19-ին, Հայաստանը ներկայացնելու համար, «Համազգային օգնություն»ը հայ երեխաներին հրավիրեց Փա-րիզ՝ մասնակցելու «Արձակուրդ չգնացած երեխաների եվրոպա-կան օրվան»: Դա մի յուրօրինակ տոն էր, որն Էյֆելյան աշ-տարակի հարևանությամբ գտնվող Մարսի Դաշտում համա-խմբել էր 25 երկրներից ժամանած բազմահազար երեխաների. մոտ 100 սկաուտներ/աշխարհի բարեկամներ եկել էին Գրավ-լինի հավաքից:

Մարսի Դաշտի ընդարձակ տարածքում տարբեր երկրների ներկայացուցիչների շարքում «Արարատ» միության մի քանի անդամներ բացել էին հայկական տաղավար՝ հնարա-վորություն տալով այցելուներին ծանոթանալու հայ մշակույ-թին և հայկական խոհանոցին: Վերջում ավելացնենք, որ հայ-կական ազգային տարազներ հագած մեր երեխաները մեկ անգամ ևս ներկայացրեցին հայկական պարը: Սոնան և Էմման հիշում են. «Մեր ազգային պարը բեմի վրա կատարելու առաջին օրը մենք շատ վախեցած և տագնապած էինք: Սակայն զգես-տափոխվելուց անմիջապես հետո մեր տրամադրությունը բարձրացավ: Բեմ ոտք դնելուց հետո մենք մեզ զգացինք ինչ-պես անվավոր չմուշկի վրա»:

Գարիկ Գալստյան

À Paris, sur le Champ de Mars nos enfants ont interprété la danse arménienne
Փարիզի Մարսի Դաշտում մեր երեխաները կատարեցին հայկական պարեր

L'ÉCOLE DE MUSIQUE A OUVERT SES PORTES POUR LES COPAINS DU MONDE

(Article paru dans *La Voix du Nord* le 20 août 2010)

Lundi soir, pour sa veillée populaire, le centre international Copains du monde a offert à Astrik Maloumian la joie de se produire au piano devant son premier public en France.

Astrik Maloumian est une Arménienne de 34 ans qui réside à Grande-Synthe depuis 2010. Sa rencontre avec le centre Copains du monde est issue d'un pur hasard. En effet, la pianiste était à la recherche d'un piano électrique. Une petite annonce l'a menée chez un vendeur potentiel: Christian Hogard (groupe Paul-Emile-Victor des Éclaireurs de Loon-Plage, Secours populaire français et centre international Copains du monde).

Astrik Maloumian et nos danseuses après le concert
Աստղիկ Մալումյանը և մեր պարուհիները համերգից հետո

Solidarité

Quelques conversations plus tard, Astrik Maloumian s'est engagée avec son « vendeur » dans la belle histoire de la solidarité. Philippe Oprandi, directeur de l'école de musique Jean-Deweerdt, et Anne Haccart, adjointe au maire, ont été très heureux d'accueillir cette centaine d'enfants et leurs accompagnants venus de Tindouf en Algérie, de Sosnowiec en Pologne, d'Ankara et d'Izmir en Turquie, d'Ingouchie et de Géorgie, et d'Arménie.

Astrik Maloumian au piano et Philippe Oprandi au tuba se sont accordés le temps d'un deuxième mouvement pour concerto d'un compositeur arménien, Alexandre Haroutiounyan.

La musicienne attend avec une grande impatience que son diplôme soit validé en France afin de pouvoir de nouveau exercer son métier de professeur de piano.

UNE DEMONSTRATION DE FABRICATION DE PAIN ARMÉNIEN

Entre le 24 juillet et le 8 août 2010, la ville de Mons en Barœul a souhaité organiser des activités pour les Monsois qui ne partaient pas en vacance. Avec le soutien du Conseil Régional, dans le cadre de l'opération « Nos quartiers d'été », ces manifestations ont pris le nom de « Mettre la campagne à la ville ». C'est une référence au passé très agricole de cette ville nouvelle qui s'est bâtie à partir des années 1960. Une véritable ferme s'est ainsi installée dans le parc du Barœul avec des moutons et des chiens de bergers, des poneys et chevaux, des oies… Vous pouviez visiter la ville en calèche avec les explications de l'Association historique de Mons en Barœul, tresser la paille, voir filer la laine, fabriquer le miel, confectionner des confitures et des épouvantails, faire des bijoux

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԲԱՑԵՑ ԻՐ ԴՌՆԵՐԸ «ԲԱՐԵԿԱՄՆԵՐ՝ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ» ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋ

(Հոդվածը լույս է տեսել «Նորդի ձայն»ում 20.08.2010 թ.)

Երկուշաբթի երեկոյան մասսայական միջոցառման շրջանակներում, «Բարեկամներ՝ աշխարհով մեկ» միջազգային կենտրոնը դաշնակահարուհի Աստղիկ Մալումյանին ուրախություն պարգևեց՝ հնարավորություն տալով նրան առաջին անգամ ելույթ ունենալ ֆրանսիացի հանդիսատեսի առջև:

Աստղիկ Մալումյանը 34-ամյա հայուհի է, ով 2010 թ. բնակություն է հաստատել Գրանդ-Սենթում: Նրա հանդիպումը «Բարեկամներ՝ աշխարհով մեկ» կենտրոնի հետ զուտ պատահականության արդյունք էր: Իրականում, դաշնակահարուհին էլեկտրական դաշնամուրի որոնումների մեջ էր: Մի փոքրիկ հայտարարության նրան տարել էր հավանական մի վաճառողի մոտ: Նա Քրիստիան Հոգարդն էր՝ Լուն-Պլաժի Պոլ-Էմիլ-Վիկտոր սկաուտների ջոկատից («Ֆրանսիական համազգային օգնություն» և «Բարեկամներ՝ աշխարհով մեկ» միջազգային կենտրոն):

Astrik Maloumian au piano / Աստղիկ Մալումյանը՝ դաշնամուրի մոտ

Համերաշխության դրսևորում

Հետագա մի քանի հանդիպումները սկիզբը դրեցին Աստղիկ Մալումյանի և իր «վաճառողի» միջև համերաշխության դրսևորման մի գեղեցիկ պատմության: Ժան-Դյուերթ երաժշտական դպրոցի տնօրեն Ֆիլիպ Օպրանդին և փոխքաղաքապետ Ան Հաքքարտը շատ ուրախ էին հյուրընկալելու մոտ հարյուր երեխաների և իրենց ուղեկցողներին, որոնք եկել էին Ալժիրի Տինդուֆ, լեհական Սոսնովիեց, թուրքական Անկարա ու Իզմիր քաղաքներից, Ինգուշեթիայից, Վրաստանից և Հայաստանից:

Աստղիկ Մալումյանը՝ դաշնամուր, և Ֆիլիպ Օպրանդին՝ շեփոր, կատարեցին հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի կոնցերտոյի երկրորդ մասը:

Երաժիշտը մեծ անհամբերությամբ է սպասում Ֆրանսիայում իր դիպլոմի վավերացմանը, որպեսզի կարողանա աշխատել իր մասնագիտությամբ՝ դաշնամուրի դասատու:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՑԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2010 թ. հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 8-ը, «Մեր թաղամասերը՝ ամռանը» ծրագրի շրջանակներում, Մոնս ան Բարոլի քաղաքապետարանը որոշել էր քաղաքում մնացած մոնսեցիների համար կազմակերպել մի շարք միջոցառումներ՝ «Գյուղը տեղափոխել քաղաք» խորագրով, որի հովանավորն էր Մարզային Խորհուրդը: Այս երիտասարդ քաղաքի համար, որը սկսել է կառուցվել 1960-ական թվականներից, դա անդրադարձ է դեպի իր գյուղատնտեսական անցյալը: Ահա այսպես մի խ-

avec l'association d'artistes des ateliers du Barœul et fabriquer du pain, notamment arménien, le 8 août.

Haïk, Nelli, Nariné et Louisette devant la table « arménienne »
Հայկը, Նելլին, Նարինեն և Լուիզեթը՝ «հայկական» սեղանի մոտ

Avec Nelli et Haïk nous avons donc montré comment nous fabriquions le *lavache* (le pain traditionnel arménien sous forme d'une fine feuille de pâte cuite au four) et fait goûter des douroums (une sorte de sandwiches de *lavache* avec des herbes, du fromage et des œufs durs), des confitures, de la *bastourma*, du *tarkhoun* (la limonade à l'estragon)… Une petite exposition de cartes et de photographies d'Arménie nous a permis d'expliquer où se situait ce pays et ses caractéristiques à un public divers et fort peu connaisseur. Les membres de l'association qui nous ont rendu visite ce jour-là nous ont soutenus et aidés à donner des explications sur l'Arménie. Notre présence et notre prestation a été bien appréciée par les visiteurs. Le seul regret reste la qualité du four mis à notre disposition qui ne nous a pas permis de bien réussir le *lavache*.

Louisette Lamarche

FORUM DES ASSOCIATIONS À MONS EN BARŒUL

Le 6 novembre 2010, l'association *Ararat* a participé au second Forum des associations de la ville de Mons en Barœul. 46 associations culturelles, caritatives, de loisirs, d'animation, d'éducation populaire ont participé à cette manifestation qui a eu lieu dans la grande salle du Fort de Mons et dans les autres salles de danse, d'art et de spectacle à proximité. La journée du Forum a été riche en animations et en démonstrations : danse, contes, musique, théâtre, jeux… Les lieux étaient très conviviaux et ont permis de nombreux échanges entre associations. Nous avons ainsi pris des contacts avec l'Association des Grecs que nous connaissions déjà, l'Association historique de Mons, qui a été intéressée par notre gazette et avec laquelle nous avons évoqué la possibilité d'une conférence sur l'Arménie, l'Association des anciens combattants avec laquelle nous avons discuté de Missak Manouchian et du film *L'Armée du crime*, *etc*. Les enfants ont profité des animations de l'association l'*Étoile du jeu*.

Nous avons tenu un stand sur les activités de l'asso-ciation et la culture arménienne. De nombreux documents ont été disponibles : cartes, photos, guides touristiques, livres d'art et historiques, souvenirs. Le stand a notamment été apprécié par Monsieur le Maire de Mons en Barœul, Rudy Elegeest, qui a questionné Nariné et Garik sur les fêtes arméniennes et les conditions de fonctionnement de l'association dans les locaux mis à disposition par la ville. D'autres élues ont posé des questions sur la prochaine fête des femmes. Enfin, tous ont pu goûter les spécialités culinaires préparées par nos soins.

կական ագարակ էր բացվել Բարոլի զբոսայգում՝ ոչխարներով և հովվի շներով, պոնիներով, ձիերով, սագերով... Դուք կարող էիք ձիակառքերով շրջել քաղաքում՝ ունկնդրելով «Մոնս ան Բարոլ քաղաքի պատմական ընկերության» բացատրությունները, տեսնել թե ինչպես են բուրդ մանում, մեղր քամում, մուրաբա եփում, խրտվիլակներ պատրաստում, զարդեղեն սարքում՝ «Բարոլի արհեստավորների ընկերության» նախաձեռնությամբ, և հաց թխում, մասնավորապես, հայկական (օգոստոսի 8-ին):

Նելլիի և Հայկի հետ մենք ցույց տվեցինք թե ինչպե՞ս են թխում ավանդական հայկական լավաշը: Այնուհետև ներկաներին հրամցրեցինք լավաշով դուռումներ՝ լցոնած կանաչիով, պանրով և եփած ձվով, մուրաբաների տեսականի, ապխտած միս, թարխունի ըմպելիք… Հայաստանի տեսարժան վայրերի նկարների և քարտեզների մեր փոքրիկ ցուցահանդեսով մենք կարողացանք բազմատարր և Հայաստանից բավական անտեղյակ այցելուներին ներկայացնել այս կովկասյան պետությունն իր աշխարհագրական դիրքով և հատկանշական բնութագրով: Այդ օրն «Արարատ» միության անդամները նույնպես մեզ օգնեցին Հայաստանով հետաքրքրվողներին բացատրություններ տալու գործում: Այցելուները բավական բարձր գնահատեցին մեր ներկայությունն ու տաղավարը: Միայն մի բանի համար կարելի է զղջալ, որ մեզ տրամադրած փուռը լավ որակի չէր, որի պատճառով թխած լավաշի որակն այնքան էլ բարձր չէր:

Լուիզեթ Լամարշ

ՄՈՆՍ ԱՆ ԲԱՐՈԼԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՐՈՒՄԸ

2010 թ. նոյեմբերի 6-ին «Արարատ» միությունը մասնակցեց Մոնս ան Բարոլ քաղաքի միությունների երկրորդ Ֆորումին: Այս միջոցառմանը ներկա էին 46 մշակութային, բարեգործական, հանրակրթական, տարբեր նախասիրությունների միություններ ու խմբակներ: Այն տեղի ունեցավ Մոնսի Ամրոցի մեծ դահլիճում, ինչպես նաև պարի, ներկայացումների և գեղագիտության հարակից սրահներում: Ֆորումի օրը հագեցած էր ցուցադրություններով ու ներկայացումներով. ասմունք, երաժշտություն, թատրոն, խաղեր… Տիրող ջերմ մթնոլորտը նպաստեց միությունների միջև կարծիքների և փորձի փոխանակմանը: Մենք շփվեցինք մեզ արդեն ծանոթ հունական համայնքի ներկայացուցիչների հետ: Մոնսի պատմական միության ուշադրությանն արժանացավ մեր պարբերականը և մենք պայմանավորվեցինք համատեղ քննարկել Հայաստանի մասին դասախոսություն կազմակերպելու հնարավորությունը: Իսկ պատերազմի վետերանների միության հետ զրույցում մենք հիշեցինք Միսակ Մանուշյանին և «Ոճրագործների բանակը» ֆիլմը: Երեխաները մասնակցեցին «Խաղի աստղ» միության կազմակերպած մրցույթներին:

Մենք ներկայացրել էինք նաև տաղավար, որը լուսաբանում էր «Արարատ»ի կատարած գործերը և հայկական մշակույթը: Բազմաբնույթ նյութեր էին ցուցադրվում. քարտեզներ, նկարներ, տուրիստական ուղեցույցներ, արվեստի ու պատմական գրքեր, հուշանվերներ: Տաղավարը մասնավորապես արժանացավ Մոնս ան Բարոլի քաղաքապետ պարոն Ռուդի Էլեժեստի գնահատանքին: Նա Նարինեին և Գարիկին հարցեր ուղղեց հայկական տոների և քաղաքի տրամադրած տարածքներում մեր միության ծավալած գործունեության մասին: Ավագանու որոշ անդամներ զրուցեցին գալիք Կանանց տոնի մասին: Եվ, իհարկե, բոլոր ներկաները հնարավորություն ունեցան համտեսելու մեր ջանքերով պատրաստած հայկական ուտեստները:

Այս միջոցառումը տեղի ունեցավ հայերենի և ֆրանսերենի դասընթացների օրը, որի պատճառով «Արարատ» միության անդամները մեզ միացան դասերի ավարտից հետո: Նրանք հասցրեցին ծանոթանալ մյուս միություններին և ունկնդրել «Ծեփորների բրիգադը» համույթի եզրափակիչ ելույթը:

La grande salle du Fort de Mons lors du Forum des associations
Մոնսի Ամրոցի մեծ դահլիճը միությունների երկրորդ Ֆորումի ժամանակ

La manifestation ayant eu lieux un jour de cours d'arménien et de français, les membres d'*Ararat* nous ont rejoint après les cours et ont pu découvrir les autres associations et entendre la prestation musicale de clôture de la *Brigade des tubes*.

Le public n'a pas été aussi nombreux que souhaité par les organisateurs municipaux et des idées nouvelles sont recher-chées pour la prochaine édition de ce forum dans deux ans.

Louisette Lamarche

DIALOGUE SUR LE TABOU ARMÉNIEN

Ce livre a été écrit par Ahmet Insel, directeur du département d'économie de l'Université Galatasaray d'Istanbul, et Michel Marian, écrivain et philosophe français, maître de conférences à Sciences PO de Paris. Il a eu pour vocation de poursuivre le dialogue ouvert avec la pétition turque de demande de pardon aux Arméniens (décembre 2008) et sa réponse de la part d'Arméniens de la diaspora française et canadienne.

Cet ouvrage a été restitué et débattu lors d'une conférence le 27 novembre 2010, à la FNAC de Lille, dans le cadre des 14e semaines européennes de la philosophie « Citéphilo ». À plus de 50 ans, A. Insel et M. Marian retracent d'abord leurs histoires personnelles et la place de la question arménienne dans celle-ci.

Dans les années 1970, avant son arrivée à Paris, pour A. Insel la question du passé arménien ne se posait pas en Turquie. Les Arméniens de Turquie étaient muets sur ce sujet par crainte et besoin d'intégration. Une fois étudiant à Paris, A. Insel appartient à plusieurs mouvements de gauche. C'est ici qu'il découvre l'ampleur et la profondeur du problème arménien avec notamment les actions terroristes de l'ASALA. L'assassinat de diplomates turcs par un vieux monsieur arménien aux États-Unis, juste par vengeance, a été un révélateur pour A. Insel. En dépit de cela, à cette époque, les Arméniens de France restaient très pudiques sur la question arménienne, surtout vis-à-vis de leurs relations turques.

Le coup d'État de 1980 en Turquie a été un accélérateur du mensonge d'État sur le génocide, transformant dans les manuels scolaires les Arméniens en agresseur en 1915. Cette prise de conscience s'est peut être faite plus vite pour A. Insel parce qu'il était en France à ce moment-là. Mais beaucoup de militants politiques de gauche turc de sa connaissance ont fait le même constat sans quitter la Turquie. Tous avaient le sentiment que seul un changement politique profond pouvait changer le point de vue turc sur l'histoire arménienne du début du 20e siècle.

Pendant la même période, à Paris, M. Marian fréquentait les mêmes milieux politiques sans croiser A. Insel. L'émigration turque en France était faible à l'époque. Une partie de sa famille est venue de l'Arménie soviétique, ce qui lui donnait un autre posi-

Louisette, Garik, David et Lilit devant le stand arménien
Լուիզեթը, Գարիկը, Դավիթը և Լիլիթը հայկական տաղավարի առջև

Ըստ քաղաքապետարանի կազմակերպիչների՝ այցելուները սպասվածից քիչ էին: Հարկավոր են նոր մտահղացումներ հաջորդ փորումի կազմակերպման համար, որը տեղի կունենա երկու տարի հետո:

Լուիզեթ Լամարշ

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱԲՈՒԻ ԹԵՄԱՅՈՎ

Այս գիրքն ունի երկու հեղինակ՝ Ահմեդ Ինսելը՝ Ստամբուլի Գալաթասարայ համալսարանի տնտեսագիտության ամբիոնի վարիչ, և Միշել Մարյանը՝ ֆրանսիացի գրող և փիլիսոփա, Փարիզի քաղաքական գիտությունների ինստիտուտի դոցենտ: Գրքի հետապնդած նպատակը՝ 2008 թ. դեկտեմբերին թուրքերի կողմից հայերին ուղղված ներողության ստորագրահավաքի մասին բաց երկխոսության շարունակելն է, ինչպես նաև ֆրանսիահայ և կանադահայ համայնքների պատասխանի քննարկումը:

2010 թ. նոյեմբերի 27-ին Լիլ քաղաքի «Ֆնակ» գրախանութի հանդիպումների սրահում, փիլիսոփայության «Սիտեֆիլո» 14-րդ եռշաբաթյա հանդիպումների շրջանակներում ծավալված երկխոսության առարկան դարձավ այս գրքի ստեղծման պատմությունը: 50 տարեկանը բոլորած Ա. Ինսելը և Մ. Մարյանը անդրադարձան նախ իրենց անձնական պատմություններին և դրանց մեջ հայկական հարցի զբաղեցրած տեղին:

1970-ական թվականներին նախքան իր Փարիզ ժամանելը, ըստ Ա. Ինսելի, հայերի անցյալի հարցը Թուրքիայում չէր բարձրացվում: Թուրքիայի հայերը գերադասում էին լռությամբ շրջանցել այն՝ ինտեգրման կարիքից և վախից դրդված: Փարիզում ուսանելու տարիներին Ա. Ինսելն ընդգրկվում է ձախակողմյան բազմաթիվ շարժումների մեջ: Այստեղ է, որ նա բացահայտում է հայկական հարցի լայնածավալ լինելն ու խորությունը, մասնավորապես ԱՍԱԼԱ-ի ահաբեկչական գործողությունների ֆոնի վրա: ԱՄՆ-ում թուրք դիվանագետների սպանությունը մի տարեց հայի կողմից, ընդամենը հանուն վրիժառության, Ա. Ինսելի համար սթափեցնող հայտնություն էր: Չնայած այս ամենին, այս ժամանակաշրջանում Ֆրանսիայի հայերը բավականին նրբանկատորեն էին մոտենում հայկական հար-ցին և անվստահություն տածում թուրքերի հետ հարաբերությունների նկատմամբ:

1980 թ. Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջումը մի նոր զարկ հաղորդեց հայոց ցեղասպանության մասին պետական խաբեությանը՝ դպրոցական դասագրքերում 1915 թ. հայերին դարձնելով ագրեսոր: Այս ինքնագիտակցումը Ահմեդ Ինսելի մոտ ավելի արագ տեղի ունեցավ, քանի որ այդ

tionnement sur les évènements. La première génération arrivée en France après 1915 s'est consacrée à l'intégration à la société française, et la seconde à la réussite sociale. La troisième, celle des années 1970, a fait naître le réveil de la conscience arménienne avec une cristallisation sur le besoin de faire reconnaître le génocide. Ce réveil a généré un antagonisme fort pour tout ce qui était turc. L'identité de la diaspora s'est alors renforcée autour de cette catastrophe. À cette époque, le rapport des Arméniens au passé était différent. Il existait deux Arménies : la soviétique que l'URSS a poussé vers l'« avenir radieux », et celle de la diaspora qui la percevait plus largement et dont neuf dixième (Arménie Occidentale dite turque) était dans la mémoire « virtuelle ».



Michel Marian présente le livre écrit conjointement avec Ahmet Insel
Միշել Մարյանը ներկայացնում է Ահմեդ Ինսելի հետ համատեղ գրված գիրքը

A. Insel a évoqué qu'à l'instar des Arméniens, certaines familles turques ont été déracinées de leurs lieux d'habitation dans les Balkans. C'est le cas de sa famille. Mais arrivant en Turquie, elles avaient l'impression de rejoindre la mère-patrie. À cette période de grands échanges forcés de populations minoritaires, les Arméniens, à la différence des Grecs ou des Bulgares, ne pouvaient pas être expulsés ailleurs qu'en Turquie pour constituer ultérieurement des États-nations homogènes. Leur seule patrie était en Anatolie. À la même époque, l'État turc a voulu créer un « nouvel homme » en provoquant une véritable rupture avec l'histoire, la culture, l'alphabet, les lois précédentes. Le drame individuel des familles migrantes est alors passé au second plan par rapport à ces bouleversements. L'État a ensuite entretenu ce citoyen sans mémoire pour qu'il soit plus malléable notamment pour le négationnisme. En dépit des efforts déployés, les questions arménienne et kurde concentrent la totalité du refoulé historique du pays et l'impossible monolithisme identitaire turc.

Les deux intervenants se sont exprimés sur l'évolution du processus de reconnaissance du génocide. La diaspora arménienne, gardienne de la mémoire du génocide, est suffisamment intégrée dans les nouveaux lieux de vie pour réussir en de nombreux pays à la faire reconnaitre. Reste maintenant à faire de même en Turquie. Pour cela il faudra partager l'histoire commune avec les Turcs et construire une relation d'avenir. La démocratisation du régime dans les années 1990 en Turquie a généré un fort mouvement de recherche d'identité, de mémoire que rien n'endigue aujourd'hui.

Cependant, sur ce chemin, les positions sont différentes. Les Turcs, porteurs de cette démarche, sont peu nombreux dans un pays de 72 million d'habitants. Politiquement, ils ne pèsent pas, mais ils jouent le rôle de briseur de tabou en permettant le débat. Le travail de mémoire s'ouvre peu à peu, les recherches sont de plus en plus nombreuses et objectives. Aujourd'hui, elles s'articulent principalement autour de trois thèmes principaux.

պահին նա գտնվում էր Ֆրանսիայում: Սակայն նրա ծանոթ շատ թուրք ձախ քաղաքական գործիչներ նույն իրողությունը փաստեցին՝ ապրելով բուն Թուրքիայում: Բոլորն ունեին այն զգացումը, որ միայն քաղաքական արմատական փոփոխությունները կկարողանան փոխել 20-րդ դարի սկզբին հայոց պատմության մասին թուրքական տեսակետը:

Ahmet Insel, enseignant à l'Univrtsité de Galatasaray
Ստամբուլի Գալաթասարայ համալսարանի դասախոս Ահմեդ Ինսելը

Այս նույն ժամանակահատվածում Մարյանը՝ չճանաչելով Ա. Ինսելին, Փարիզում շփվում էր քաղաքական նույն շրջանակների հետ: Այդ տարիներին թուրքերի քանակը Ֆրանսիայում սակավաթիվ էր: Մարյանի ընտանիքի մի մասը ներգաղթել էր Սովետական Հայաստանից, որի պատճառով նրա դիրքորոշումը տվյալ իրադարձությունների նկատմամբ տարբերվում էր: 1915 թ. հետո Ֆրանսիա գաղթած հայերի առաջին սերունդը ջանք չխնայեց ֆրանսիական հասարակությանը ինտեգրվելուն, իսկ երկրորդը՝ սոցիալական բարեկեցության ու հաջողության հասնելուն: Երրորդը՝ 1970-ական թվականների սերունդը, սկիզբը դրեց հայկական գիտակցության զարթոնքին, որն ամրապնդվեց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության շուրջը: Այս զարթոնքն առաջացրեց թուրքական ամեն ինչի հանդեպ մեծ անվստահություն: Հայկական սփյուռքի ինքնությունն էլ ավելի ամրապնդվեց այս աղետի շուրջը, թեպետ այդ շրջանում հայերի վերաբերմունքն անցյալի նկատմամբ տարբեր էր: Գոյություն ուներ երկու Հայաստան. առաջինը՝ խորհրդային, որին ԽՍՀՄ-ը տանում էր դեպի «պայծառ ապագա», և երկրորդը՝ սփյուռքինը, ավելի լայն իմաստով, որի 9/10 մասը (Արևմտյան Հայաստանը) գտնվում էր հայերի «երևակայական» հիշողության մեջ:

Ա. Ինսելն ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ հայերի նման որոշ թուրք ընտանիքներ նույնպես արմատախիլ են եղել իրենց բալկանյան բնակավայրերից: Իր ընտանիքը դրանցից մեկն էր: Սակայն, գալով Թուրքիա, նրանք ունեին այն տպավորությունը, թե վերադառնում են մայր հայրենիք: Ազգային փոքրամասնությունների բռնի փոխանակումների և տեղահանումների այս ժամանակահատվածում հայերը, ի տարբերություն հույների կամ բուլղարացիների, չէին կարող վտարվել Թուրքիայից բացի մի այլ երկիր՝ հետագայում կառուցելու միատարր ազգային պետություն: Նրանց միակ հայրենիքն Անատոլիան էր: Նույն ժամանակ, թրքական պետությունը ստանձնեց «նոր մարդ» ստեղծելու գործը՝ առաջացնելով իրական խզում պատմության, մշակույթի, այբուբենի և նախկին օրենքների հետ: Ահա այս փոթորկումների ֆոնի վրա գաղթող ընտանիքների անձնական ողբերգություններն անցան երկրորդ պլան: Այնուհետև, թրքական պետությունը մեծացրեց ու կրթեց հիշողությունից զուրկ քաղաքացու, որպեսզի նա լինի ավելի կառավարելի, հատկապես մերժողականության գործում:

- Dans certains villages (près de Van, par exemple), la restauration de vestiges arméniens est demandée par les habitants par intérêt touristique mais aussi par volonté de renouer avec l'histoire.
- La nouvelle liberté de parole sur ce sujet depuis 10 ans génère de nombreux travaux de recherche sur les différents massacres (1895, 1909, 1915) et les différentes populations touchées. La mémoire orale se matérialise peu à peu.
- Environ 200 à 250 000 enfants arméniens auraient été convertis entre 1915 et 1923 pour échapper au génocide. Aujourd'hui, ces grands-pères et grands-mères arméniens ressurgissent. Certains Turcs cachés découvrent leur arménité, voire la revendique. Les Arméniens de Turquie sont donc plus nombreux que les 60 000 recensés.



De nos jours, il existe au moins trois difficultés pour la reconnaissance du génocide arménien.

- Il n'y aura pas de rupture historique et d'excuses sans rupture de régime politique, car le mensonge d'État a été trop long. L'évolution démocratique de la Turquie doit donc se poursuivre.
- La question de la récupération des biens arméniens spoliés reste sous-jacente dans la question de la reconnaissance du génocide et fait peur à une partie de la population turque.
- 60 % des Turcs sont jeunes et ont subi le négationnisme du système éducatif. Ils sont donc ignorants de cette question, voire hostiles aux Arméniens présentés comme des « traitres » pendant la Première Guerre mondiale. L'assassin de Hrant Dink est représentatif de cette génération.

La position des Arméniens de la diaspora a changé favorablement elle aussi compte tenu de :

- l'accession à l'indépendance de l'Arménie en 1991 qui a rendu ce pays réel face au pays virtuel de la diaspora et à l'Arménie précédemment soviétique. Ce nouvel État est voisin de la Turquie et a besoin d'elle pour commercer. Les relations bilatérales doivent donc évoluer.

Չնայած ջանքերին, միայն հայկական և քրդական հարցերն իրենցով կասկածի տակ են դնում այս երկրում պատմության ժխտողականությունը և թուրք ինքնության անհնարին միատարրությունը:

Այնուհետև երկու բանախոսներն արտահայտեցին իրենց տեսակետները ցեղասպանության ճանաչման գործընթացի զարգացման մասին: Տարբեր երկրներում հանգրվանած սփյուռքահայությունը՝ ցեղասպանության հիշողության պահապանը, բավականաչափ ինտեգրված լինելով՝ հաջողությամբ այն ճանաչել տվեց բազմաթիվ պետությունների կողմից: Այժմ մնում է նույնն անել Թուրքիայում: Դրա համար անհրաժեշտ է թուրքերի հետ միասին կիսել ընդհանուր պատմությունը և կառուցել հեռուն գնացող հարաբերություններ: Թուրքիայում 1990-ական թվականներին պետական ռեժիմի ժողովրդավարությունն առաջ բերեց ինքնության և հիշողության որոնման մի հզոր շարժում, որին այսօր ոչինչ չի խոչընդոտում:

Սակայն այս ճանապարհին դիրքորոշումները տարբեր են: Նմանատիպ գաղափարը կրող թուրքերը 72 միլիոն բնակչություն ունեցող երկրում սակավաթիվ են: Քաղաքական առումով նրանք մեծ կշիռ չունեն, բայց կարևոր դեր են խաղում՝ ճանապարհ հարթելով երկխոսության համար և փշրելով հայկական հարցի շուրջը եղած տաբուն: Պատմական հիշողության վերականգնման աշխատանքը տալիս է իր առաջին արդյունքները, հետազոտություններն առավել բազմաթիվ են և անկողմնակալ: Այսօր նրանք առնչվում են հիմնականում երեք սկզբունքային թեմաների.

- որոշ գյուղերում (օրինակ, Վանի շրջանի) բնակիչները պահանջում են վերականգնել հայկական հուշարձանների ավերակները՝ տուրիստական շահից ելնելով, բայց և նաև պատմությունը վերականգնելու կամքից դրդված:
- վերջին 10 տարում խոսքի ազատությունն այս թեմայի վերաբերյալ խթանել է բազմաթիվ գիտական աշխատանքների լույս տեսնելուն՝ նվիրված տարբեր ջարդերին (1895, 1909, 1915) և դրանցից տուժած ժողովուրդներին: Բանավոր հիշողությունն աստիճանաբար նյութականացվում է:
- 200-250 հազար հայ մանուկներ կրոնափոխվել են 1915-1923 թվականների ցեղասպանությունից փրկվելու համար: Այսօր այդ տատիկներն ու պապիկները «վերածնվում» են: Որոշ ծպտյալ թուրքեր բացահայտում են իրենց հայ լինելը, և երբեմն նույնիսկ բարձրաձայն հայտարարում այդ մասին: Ելնելով այս փաստից, Թուրքիայի հայերն այսօր 60 հազարից շատ ավելի են:

Ներկայումս հայոց ցեղասպանությունը ճանաչելու ճանապարհին կա առնվազն երեք դժվարություն.

- պատմության արմատական վերանայումը և ներողություն խնդրելն առանց քաղաքական ռեժիմի փոփոխության չի կարող լինել, քանզի պետական խաբկանքը շատ երկար է տևել:
- հայերի յուրացված ունեցվածքի և հարստության վերադարձնելու խնդիրը առկախ է մնում ցեղասպանության ճանաչման հարցում և վախ է առաջացնում թուրք բնակչության որոշ հատվածի մոտ:
- թուրք բնակչության 60 % երիտասարդներ են, որոնք սովորել են կրթական ժխտողական համակարգում: Նրանք անտեղյակ են ցեղասպանության հարցում և անգամ ատելությամբ են լցված հայերի նկատմամբ, որոնք ներկայացված են որպես Առաջին համաշխարհային պատերազմի տարիների «դավաճաններ»: Հրանտ Դինքին սպանողն այդ սերնդի ներկայացուցիչն է:

Սփյուռքահայության տեսակետը նույնպես դրական փոփոխությունների է ենթարկվել՝ հաշվի առնելով.

- 1991 թ. Հայաստանի անկախացումը, որն այս երկիրը դարձրեց իրական՝ ի դեմս սփյուռքի երևակայական հայրենիքի և նախկին Սովետական Հայաստանի: Այս նոր պետությունը Թուրքիայի հարևանն է և նրա կարիքն ունի

- l'affirmation de la communauté arménienne de Turquie, que l'on croyait bâillonnée et en voie de disparition. Au-delà de la reconnaissance du génocide, cette communauté demande une égalité réelle des droits et sa place en Turquie.
- l'apparition d'une société civile en Turquie qui porte le débat avec constance et devient une alliée possible pour les Arméniens dans leur cause.

Mais il existe encore des blocages. Il est toujours difficile de faire comprendre que la reconnaissance du génocide ne viendra pas uniquement de la pression internationale sur la Turquie. Il y a d'autres chemins possibles. Selon A. Insel, le durcissement des positions extérieures empêche parfois les Turcs de se poser les vraies questions, à savoir : ce que l'on attend de la reconnaissance ; ce que l'on commencera à reconstruire ensuite ; y aura-t-il une possibilité de retour pour ceux qui le voudraient ; quels seront les liens entre États arménien et turc ; comment seront respectés les droits des Arméniens de Turquie ? Chaque peuple évolue vers plus de maturité, vers un retour aux racines pour retrouver la mémoire. C'est cette évolution qui permet d'avancer.

Le public et les intervenants se sont ensuite interrogés sur l'existence d'Arméniens non chrétiens et leur positionnement vis-à-vis de l'arménité. La question arménienne ne se limite pas aujourd'hui à la confrontation entre chrétiens et musulmans. En 1915, il n'y avait pas non plus un problème d'opposition entre confessions, même si l'organisation de chaque communauté était fortement marquée par la religion, chacun, Turc comme Arménien, se traitant d'infidèle. Par la suite, ce facteur a été manipulé pour attiser la haine entre peuples.

A également été évoqué le manque d'enthousiasme de la diaspora arménienne pour la pétition de demande de pardon. Le contexte politique des protocoles entre les États arménien et turc n'était pas favorable compte tenu de la tension sur les négociations sur le Haut-Karabakh et de l'acceptation de la sous-commission des historiens sur les événements de 1915. Certains membres de la diaspora sont aussi maximalistes quant à leurs attentes du dialogue. Le mot génocide n'est pas utilisé dans la pétition. Leurs auteurs demandent pardon au nom de la génération actuelle qui ne parvient pas à faire reconnaitre les faits et à faire mettre un terme au négationnisme. Pour eux, le terme de génocide est aujourd'hui souvent galvaudé.

On s'est questionné sur l'existence de sources historiques en Turquie concernant ces évènements. Les archives ottomanes sont riches de pièces sur l'organisation et la volonté de procéder à l'épuration ethnique. Se pose encore la question du caractère raciste de cette démarche. L'ensemble des archives de l'armée ne sont pas encore accessibles. Seulement neuf volumes ont été publiés sur cette période dont les 4e et 5e apportent déjà des éclaircissements sur les événements en question. Les télégrammes de Talât Pacha et des documents d'*Union et Progrès* viennent d'être publiés. Les minutes des procès de 1919 figurent dans les journaux officiels de l'époque. Les connaissances seront plus riches lorsque l'on trouvera les archives des procès. Par ailleurs, les auteurs des crimes ont été jugés et condamnés, et des peines de mort par contumace ont été prononcées par des tribunaux ottomans. Aujourd'hui, les Turcs doivent reprendre eux-mêmes le fil de leur histoire. La pression extérieure seule ne sera jamais suffisante dans cette longue démarche.

Les registres des commissions qui ont géré les biens abandonnés n'ont pas été retrouvés, à l'exception d'une partie de celui de la ville d'Ourfa. Ces commissions ont été mises en place 2 à 3 mois après la déportation des Arméniens. Les biens ont été vendus, affectés à des émigrés des Balkans, appropriés par des dirigeants du régime pour financer leur parti ou s'enrichir personnellement. Manquent également les archives du parti *dachnak*.

առևտրական կապերի ամրապնդման ոլորտում: Երկկողմանի հարաբերություններն այսպիսով պետք է զարգանան:

- Թուրքիայի հայ համայնքի ինքնահաստատումը, որին համարում էին «անձայն» և անհետացման եզրին կանգնած: Ցեղասպանության ճանաչումից բացի այս համայնքը պահանջում է իրավունքների իրական հավասարություն և իր տեղը Թուրքիայում:

- Թուրքիայում քաղաքացիական հասարակության կազմավորումը, որը համառորեն ստանձնել է երկխոսության ճանապարհը՝ հայկական հարցում հայերի համար դառնալով հնարավոր մի դաշնակից:

Սակայն խոչընդոտներ դեռ կան: Դժվար է հասկացնել, որ Թուրքիան կճանաչի ցեղասպանությունը բացառապես միջազգային ճնշումների ազդեցության տակ: Կան հնարավոր այլ ճանապարհներ: Ըստ Ինսելի, արտաքին դիրքորոշումների կոշտացումը Թուրքիայի նկատմամբ երբեմն խանգարում են թուրքերին որոնելու և գտնելու իրական հարցերի պատասխանները. ի՞նչ է ակնկալվում ցեղասպանության ճանաչումից հետո, ի՞նչից պետք է սկսել հետագա վերակառուցումը, կլինի՞, արդյոք, վերադարձի հնարավորություն նրանց համար, ովքեր կցանկանան, ինչպիսի՞ն կլինեն հայ-թուրքական երկկողմ հարաբերությունները, ինչպե՞ս կպաշտպանվեն հայերի իրավունքները Թուրքիայում: Յուրաքանչյուր ժողովուրդ զարգանում է հասունացման ճանապարհով, վերադառնալով դեպի արմատները՝ հիշողությունը վերագտնելու ակնկալիքներով: Ահա այս զարգացումն է, որ թույլ է տալիս առաջ ընթանալ:

Այնուհետև ներկաները հարցեր ուղղեցին բանախոսներին՝ ոչ քրիստոնյա հայերի գոյության և նրանց հայ լինելու դիրքորոշման մասին: Հայկական հարցն այսօր չի սահմանափակվում քրիստոնյաների և մահմեդականների առճակատմամբ: 1915 թ. նույնպես չկային կրոնական հակասություններ՝ չնայած այն փաստին, որ յուրաքանչյուր համայնք ուներ իր կրոնական հստակ պատկանելիությունը. բոլորը՝ թուրք թե հայ, միմյանց համարում էին անհավատ: Հետագայում այս փաստն օգտագործվեց երկու ժողովուրդների միջև ատելությունը խորացնելու համար:

Բանավեճի ընթացքում քննարկվեց նաև թուրքերի կողմից ներողություն խնդրելու ստորագրահավաքի նկատմամբ սփյուռքահայերի զուսպ հետաքրքրության հանգամանքը: Հայաստանի և Թուրքիայի միջև համաձայնագրերի կնքման քաղաքական համատեքստը նպաստավոր չէր՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունների և 1915 թ. իրադարձությունների հետ կապված պատմաբանների ենթահանձնաժողով կազմելու ընդունման վերաբերյալ լարվածությունը: Որոշ սփյուռքահայեր առավելապաշտ են, երբ խոսք է գնում երկխոսությունից իրենց սպասված ակնկալիքներին: Վերոնշյալ ստորագրահավաքում ցեղասպանություն բառը չի օգտագործվել: Տեքստի հեղինակները ներողություն են խնդրում այսօրվա սերնդի անունից, որը չի կարողանում հասնել պատմական փաստերի ճանաչմանը, ո՛չ էլ ժխտողականությանը վերջ տալուն: Նրանց համար ցեղասպանություն տերմինն այսօր հաճախ է շահարկվում և սխալ կիրառվում:

Հարց բարձրացվեց նաև 1915 թ. դեպքերին առնչվող Թուրքիայում պատմական աղբյուրների գոյության մասին: Օսմանյան արխիվները հարուստ են էթնիկ զտումներ իրականացնելու ցանկության և կազմակերպման մասին նյութերով: Դեռևս հարցականի տակ է դրվում այս գործողությունների ցեղապաշտական բնույթը: Ռազմական արխիվների զգալի մասը դեռևս հասանելի չէ: Հրատարակվել է այս ժամանակահատվածին վերաբերող ընդամենը ինը հատոր, որոնցից 4-րդ և 5-րդն արդեն լուսաբանում են խնդրո առարկա դեպքերը: Վերջերս հրատարակվեցին Թալեաթ Փաշայի հեռագրերը և «Միություն և առաջադիմություն» կուսակցության փաստաթղթերը: Տվյալ ժամանակաշրջանի պաշտոնական թերթերում

Le public s’est intéressé à la sécurité des défenseurs de la reconnaissance du génocide en Turquie. Selon A. Insel, la liberté de parole est aujourd’hui respectée en Turquie, ce qui lui permet de relativiser les inquiétudes à ce propos. Des menaces existent encore mais la police fait bien son travail. On n’est pas plus menacé lorsque l’on évoque le génocide que lorsque l’on parle de la question kurde ou lorsque l’on critique le gouvernement. La question est devenue ordinaire et le gouvernement ne semble pas être du côté des nationalistes.

Les intervenants ont été interrogés, en dernier point, sur leur positionnement vis-à-vis des États turc et arménien. Leur rôle n’est pas d’être médiateur entre les gouvernements, mais d’instituer le débat dans la société. Lorsque cette dernière sera sensible à la question, la situation changera. Les élections étant actuellement libres en Turquie, ce sont les électeurs qui changeront les choses.

Michel Marian et Ahmet Insel — Միշել Մարյանն ու Ահմեդ Ինսելը

Ensemble les participants ont souhaité que l’intelligence collective mise en œuvre pour défendre la revendication de la reconnaissance du génocide serve également à promouvoir une mémoire partagée avec les Turcs. Ajoutons aussi qu’une quinzaine de membres de l’association *Ararat* étaient présents dans le public et ont participé aux débats avec intérêt.

Louisette Lamarche

նկարագրվում են 1919 թ. դատական նիստերից որոշ հատվածներ: Ավելին կարելի է իմանալ, երբ կգտնվեն այդ նիստերի արխիվները: Ընդ որում, օսմանյան դատարանի կողմից հանցանքի հեղինակները հեռակա կարգով դատապարտվել են և արժանացել մահապատժի: Այսօր թուրքերն իրենք պետք է վերագտնեն իրենց պատմության թելը: Այս երկարատև գործընթացում միայն արտաքին ճնշումները երբեք բավական չեն լինի:

Հայերի լքված ունեցվածքն ու հարստությունը կարգավորող հանձնաժողովի մատյանները չեն գտնվել՝ բացառությամբ մի քանիսի, որոնք վերաբերվում են Ուրֆա քաղաքին: Այս հանձնաժողովները ստեղծվել էին հայերի տարհանումից 2-3 ամիս հետո: Ողջ գույքն ու ունեցվածքը վաճառվել է, տրվել Բալկաններից ներգաղթած թուրքերին, յուրացվել վարչախմբի ղեկավարների կողմից՝ իրենց կուսակցության ֆինանսավորման կամ անձնական հարստացման նպատակով: Բացակայում են նաև դաշնակցության կուսակցության արխիվները:

Ներկա գտնվողներին հետաքրքրեց նաև Թուրքիայում ցեղասպանության ճանաչման պաշտպանների անվտանգությունը: Ըստ Ահմեդ Ինսելի, Թուրքիայում կա խոսքի ազատություն, ինչն իրեն թույլ է տալիս հարաբերական դարձնել այդ խնդրի հետ կապված անհանգստությունը: Սպառնալիքներ դեռ կան, բայց ոստիկանությունն իր գործը լավ է կատարում: Վտանգը նույնն է ցեղասպանության մասին խոսելու, քրդական հարցը բարձրացնելու, թե կառավարությանը քննադատելու դեպքում: Ցեղասպանության հարցը դարձել է սովորական, և կառավարությունը կարծես թե ազգայնամոլների կողմնակիցը չէ:

Բանավեճի ավարտին բանախոսներին հարց ուղղվեց իրենց իսկ դիրքորոշման մասին՝ ի դեմս հայ և թուրք պետությունների: Նրանց դերը կառավարությունների միջև միջնորդ լինելը չէ, այլ հասարակության մեջ երկխոսություն հաստատելը: Երբ հասարակությունը զգայուն կլինի այս հարցի նկատմամբ, իրավիճակը կփոխվի: Հաշվի առնելով այն փաստը, որ այսօր Թուրքիայում ընտրություններն ընթանում են ազատ պայմաններում, ապա ընտրողներին է վերապահված ապագա բարեփոխումները:

Մասնակիցները միակարծիք էին, որ ցեղասպանությունը ճանաչելու համար գործի դրված հավաքական ողջախոհությունը կծառայի նաև թուրքերի հետ հիշողությունը համատեղ կիսելու ցանկությանը: Վերջում հավելենք նաև, որ այս հանդիպմանը ներկա էին «Արարատ» միության 15 անդամներ, որոնք ակտիվորեն մասնակցեցին բանավեճին:

Լուիզեթ Լամարշ

SAINT SACREMENT ET MÉDITATION DANS LA MAISON DE DIEU

Le lieu et l’heure du rendez-vous : ville de Bruxelles, église apostolique arménienne Sainte Marie-Madeleine, 10 heure du matin, le 6 janvier 2011. L’objet du rendez-vous : la fête de la naissance de Jésus Christ, de l’apparition de Dieu et du Baptême.

L’église est le lieu de rencontre de Dieu et des hommes. C’est le lieu saint où on peut entrer en contact avec le Seigneur. Chaque chrétien a besoin de cette rencontre. Il existe des fêtes religieuses importantes et centrales pour lesquelles notre présence est indispensable, d’abord, à titre personnel. En revanche, une absence est moins pardonnable ce jour-là. La foi a été et reste le facteur le plus important de la conservation du peuple arménien. C’est ainsi que Khatchatour Abovian disait : « *C’est à vous, tout jeunes Arméniens, que je m’adresse. Je bénis vos prénoms, qu’on me sacrifie pour votre âme. Apprenez dix langues mais tenez fort à votre langue, à votre foi* ».

ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍՏԾՈ ՏԱՆԸ

Հանդիպման վայրը և ժամը՝ ք. Բրյուսել, Սուրբ Մարիա-Մագդալենա Հայկական Առաքելական Եկեղեցի, առավոտյան ժամը 10-ին, 6 հունվարի 2011 թիվ: Հանդիպման առիթը՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության, մկրտության տոնը:

Եկեղեցին Աստծո և մարդու հանդիպավայրն է, այն սուրբ վայրը, որտեղ հաղորդակցվում ես Տիրոջ հետ: Յուրաքանչյուր քրիստոնյա կարիք ունի այդ հանդիպմանը, բայց կան եկեղեցական կարևոր և առանցքային տոներ, որոնց մեր ներկայությունն անհրաժեշտություն է հենց մեր անձի համար, իսկ բացակայությունը՝ միանշանակ անընդունելի: Հայ ժողովրդի ազգապահպանման կարևորագույն գործոնը եղել է ու մնում է հավատը: Ինչպես կասեր Խաչատուր Աբովյանը՝ «Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնիմ, ձեր հոգուն դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը դայի՛մ (ամու՛ր) բռնեցեք»:

Pour garder avec lucidité la foi, il faut souvent visiter l'Église et participer à la vie religieuse. Pour un Arménien qui a trouvé son havre dans la diaspora, il est très important de con-server, sans réserve, sa langue et sa foi nationale. Si tu cesses de vivre selon les traditions de ton peuple, l'assimilation se produit très facilement et sans s'en apercevoir. Fréquenter l'église est une tradition et une coutume séculaire à préserver quelques soient les circonstances, matérielles ou non. Je ne souhaitais pas commencer à relater la magnifique fête de Noël de cette manière mais ma plume choisit elle-même sa restitution et proclame, avant tout, les réflexions et les craintes évidentes de sa propre conscience.

Cette année, la communauté arménienne de Lille avait décidé de célébrer la fête de Noël à l'église apostolique armé-nienne Sainte Marie-Madeleine de Bruxelles : dommage d'avoir été si peu nombreux.

Un petit exposé sur l'église arménienne implantée dans le quartier d'Ixelles de Bruxelles. La décision de construire cet édifice a été prise en 1985. La première pierre a été posée une année après. La fin de la construction date du 6 mai 1990 et a fait l'objet d'une bénédiction en présence du regretté Vazguen 1er, le catholicos de tous les Arméniens. La fête d'inauguration a été somptueuse et accompagnée de la présence du chef de l'église catholique de Bruxelles. L'existence même d'une église armé-nienne construite en 1990 selon les règles classiques d'architec-ture traditionnelle nationale est un grand acquis pour les Armé-niens de la diaspora. Cette église arménienne, judicieusement im-plantée au cœur de la capitale européenne, est le lieu saint désiré dans lequel on peut retrouver la paix de l'âme et l'espoir. Ce seuil saint apporte un soulagement et une consolation au pèlerin arménien égaré, absorbé par les soucis de la vie quotidienne et souffrant de nostalgie. Cette formidable station de foi peut deve-nir un pansement pour nos cœurs en peine.

Le 6 janvier ! L'année s'annonce par la nouvelle de l'arrivée du Sauveur. La naissance de Jésus Christ est la première

L'Eglise apostolique arménienne Sainte Marie-Madeleine de Bruxelles
Բրյուսելի Սուրբ Մարիա-Մագդալենա Հայկական Առաքելական եկեղեցին

Հավատը վառ պահելու համար անհրաժեշտ է հաճախակի այցելել եկեղեցի և մասնակցել եկեղեցական կյանքին: Սփյուռքում իր հանգրվանը գտած հայի համար շատ ավելի կարևոր է ազգային լեզվի և հավատի անվերապահ պահպանումը, քանզի ձուլումը կատարվում է շատ դյուրին ու աննկատ, երբ դադարում ես ապրել ազգիդ բնորոշ ավանդույթներով: Եկեղեցի գնալը հենց այսպիսի մի ավանդույթ ու դարերից եկած սովորույթ է՝ անկախ բոլոր իրական ու անիրական հանգամանքներից: Չէի ցանկանա Սուրբ Ծննդյան հրաշալի տոնի մոտեցումը այսպես սկսել, սակայն գրիչս ինքն է ընտրում իր շարադրանքը և առաջնահերթ բարձրաձայնում սեփական տիրոջ ակնառու տագնապներն ու մտորումները:

Այս տարի լիլահայ համայնքը որոշել էր Սուրբ Ծննդյան տոնը նշել Բրյուսելի Սուրբ Մարիա-Մագդալենա հայկական առաքելական եկեղեցում: Ցավոք, համայնքի ներկայացուցիչները սակավաթիվ էին այնտեղ:

Մի փոքրիկ ակնարկ Բրյուսելի Իքսել թաղամասում հանգրվանած հայկական եկեղեցու մասին: Կառուցման որոշումն ընդունվել է 1985 թ., իսկ առաջին հիմնաքարը տեղադրվել է 1986 թ.: Եկեղեցաշինարարությունը ավարտվել է 1990 թ.: Նույն թվի մայիսի 6-ին կատարվել է եկեղեցու օծումը և բացումը՝ Վազգեն Ա. երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից: Կատարվել է ճոխ հանդիսություն, որն իր ներկայությամբ պատվել է Բրյուսելի կաթոլիկ Պատրիարքը: 1990 թ. ավանդական հայկական ոճով կառուցված այս եկեղեցու գոյության իրողությունն ինքնին արդեն մեծ ձեռքբերում է սփյուռքահայության համար: Եվրոպայի մայրաքաղաքի սրտում տեղադրված այս գողտրիկ հայկական եկեղեցին այն ցանկալի սուրբ վայրն է, որտեղ կարող ես վերագտնել հոգու խաղաղություն ու հույս: Այս սուրբ շեմը սփոփանք ու մխիթարություն է բերում դժվարին կենցաղով ապրող հոգսաշատ, մոլորյալ ու կարոտախտից տառապող հայ պանդուխտին: Հավատքի այս հրաշալի կայարանը կարող է սպեղանի դառնալ մեր ցաված սրտերի համար:

Հունվարի վեց: Տարին բացվում է Փրկչի գալստյան բարի ավետիսով: Հիսուս Քրիստոսի Ծննդյան օրն առաջին տերունական-տաղավար տոնն է, որը մեր եկեղեցիներում նշվում է մեծ շուքով ու ոգևորությամբ: Օրը ցանկալի և սպասված էր համայն հայերի համար: Ժամը 10-ին վերոհիշյալ եկեղեցում սկսվեց Տերունական պատարագը: Տիրոջ ծնունդը տեղի է ունեցել կեսգիշերին, իսկ Մկրտությունը, որի արարողակարգը Ջրօրհնեքն է՝ կեսօրին, Հորդանան գետում՝ Հովհաննես Մկրտչի կողմից: Եկեղեցու դռները բաց էին ու հյուրընկալ, տիրող մթնոլորտը՝ ջերմ ու տոնական, խնկաբույրը և բազմաքանակ այրվող մոմերն ու ջահերը խորհրդավորության շղարշով էին ներկայանում: Յուրաքանչյուրը լավ գիտեր ողջ արարողակարգը, բայց կրկին ու կրկին հոգու թրթիռ, սպասում ու հուզում էր ապրում՝ օրվա խորհրդով խանդավառված:

Բարի Ավետիսն արդեն իսկ մեր սրտերում էր ու մեր շուրթերի վրա: Պատարագիչը Սուրբ Մարիա-Մագդալենա եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Զատիկ Վարդապետ Ավետիքյանն էր: Արարողակարգին ակտիվ մասնակցություն ուներ սարկավագների դասը: Յուրաքանչյուր հոգևորական իր տեղն ու դերն ուներ ողջ արարողության ընթացքում: Եկեղեցում գործում է նաև մի հրաշալի երգչախումբ՝ Հարություն Լուլեցու գլխավորությամբ, որը պատարագի ընթացակարգը զարդարեց իր անզուգական երգարվեստով: Հիացմունքի և կարոտաբաղձության հրաշալի վայրկյաններ ապրեցի՝ վայելելով նրանց կատարած բազմաթիվ շարականների մաքրամաքուր, աստվածային շնչով ոգեկոչված սուրբ մեղեդիները: Սուրբ Հայրը պատարագը մատուցեց անթերի՝ բաց չթողնելով օրվա խորհրդին վերաբերող որևէ աննշան մանրուք: Լիաբերան լցված եկեղեցու պայմաններում նա արհեստավարժ կերպով ժողովներին Աստծո խոսքը հաղորդում էր նախ հայերենով, ապա գեղեցիկ և անսխալ ֆրանսերենով: Բրյուսելում մեծաքանակ են մայրենին այլևայլ պատճառներով չիմացող և հայերեն չխոսող հայորդիները, որոնք դեռ պահում են իրենց հավատը: Սուրբ Ծնունդը բոլորիս միավորել էր իր խնկաբույր ավետիսով, աստվածային խոր-հուրդով, երգչախմբի հոգեպարար մեղեդիով և ամրակուռ հավատով:

fête ecclésiastique importante qui est célébrée dans nos églises en grandes pompes et avec enthousiasme. Ce jour-là est désiré et attendu par tous les Arméniens. À 10 heures, dans l'église mentionnée, a commencé la messe dominicale. La naissance de Jésus eut lieu à minuit, et son baptême, incarné par de rituel de la Bénédiction de l'eau, se produisit à midi, dans les eaux du Jourdan, par Saint Jean-Baptiste). Les portes de l'église ont été ouvertes et hospitalières, l'atmosphère était à la fête et chaleureuse. L'arôme de l'encens et de nombreux cierges et bou-gies enrobaient d'un voile mystérieux la cérémonie. Chacun d'entre nous connaissait le déroulement de la messe mais, enthousiasmés par le sacrement de la journée, tous partageaient encore et encore une vive émotion qui touchait profondément les âmes.

La bonne nouvelle était déjà dans nos cœurs et sur nos lèvres. La cérémonie religieuse a été dirigée par le berger spirituel de l'église Marie-Madeleine, l'évêque Zadig Avétikian. Ses diacres ont prêté leur concours actif au déroulement de la messe. Chaque assistant ecclésiastique avait sa place et son rôle pendant toute la cérémonie. L'église est dotée d'un formidable chœur, dirigé par Haroutioun Louleci, qui a ponctué la messe par son interprétation unique de chants liturgiques. J'ai vécu des moments de joie et de nostalgie en écoutant leur nombreux *charakans* (chants liturgiques arméniens), les mélodies saintes, exécutées avec beaucoup de pureté et d'inspiration. Le saint père, maître de la cérémonie, a parfaitement célébré la messe sans omettre le moindre détail du sacrement. Dans une église comble, il a habilement transmis aux fidèles réunis la parole de Dieu en arménien puis en un parfait français. À Bruxelles, le nombre d'Arméniens qui, pour différentes raisons, ne parlent pas leur langue maternelle mais gardent leur foi, n'est pas négligeable. Le sacrement de la journée nous a tous réuni par l'annonciation encensée, par la parole divine, par la douce mélodie du chœur et par une solide foi.

L'église, déjà comble, a débordé de monde lors de la distribution de l'hostie et de l'eau bénite. Je ne sais pas si je dois parler de l'espèce arménienne d'homme ? La réalité des choses est que nous attachons plus d'importance aux objets qu'à la spiritualité et aux sentiments. Est-ce que pour beaucoup d'entre nous le plus important est de goûter l'hostie et d'emporter de l'eau bénite dans des bouteilles ? Peut-être… Même seulement pour le pain et l'eau visitez souvent l'église pour rester Arménien, pour avoir une foi forte et pour pouvoir murmurer le « Notre Père »… en arménien… et avec dévotion. Que pourrions-nous faire sans Dieu et sans Maison de la foi ? Imaginez-vous que nous pourrions exister ? De Lille à Bruxelles il n'y a qu'une heure de route, ce n'est donc pas loin… Visitez l'église apostolique arménienne Sainte Marie-Madeleine… en tant que pèlerin…

Pour nous, les Arméniens, chaque cérémonie qui se déroule dans l'église apostolique arménienne porte un message et un important sacrement intime.

Susanna Mughnetsyan

Le khatchkar voisin de l'Eglise apostolique arménienne de Bruxelles
Բրյուսելի հայկական առաքելական եկեղեցուն հարակից խաչքարը

Լեփ-լեցուն եկեղեցում խիտ կուտակումներ առաջացան հատկապես նշխար և օրհնյալ սուրբ ջուրը բաժանելու ժամանակ: Չգիտեմ, խոսե՞մ հայ մարդու տեսակի մասին, թե՞ ոչ, բայց իրողությունն այն է, որ մենք ավելի հաճախ կարևորում ենք առարկաները, քան երևույթներն ու զգացողությունները: Արդյոք շատերիս համար կարևորագույն խնդիրը նշխար համտեսելն ու շշերով օրհնյալ ջուր տանե՞լն է… Գուցե… Թեկուզ և դրանց՝ հացի և ջրի առարկայական խորհրդի համար, հաճա՛խ այցելեք եկեղեցի, որպեսզի հա՛յ մնաք, ամուր հավատ ունենաք ու «Հայր մեր» մրմնջալ կարողանաք… հայերենով ու… հավատով: Ի՞նչ կանեինք մենք առանց Աստծո և Հավատի տան… Պատկերացնո՞ւմ եք, կլինեինք արդյոք… թե՞… Լիլից մինչև Բրյուսել մեկ ժամվա ճանապարհ է, այնքան էլ հեռու չէ… Այցելե՛ք Սուրբ Մարիա-Մագդալենա հայկական առաքելական եկեղեցի՝… որպես ուխտավոր…

Հայկական լուսավորչական-առաքելական եկեղեցում կատարվող յուրաքանչյուր ծիսակատարություն մեզ՝ հայերիս համար շատ կարևոր ու հոգեհարազատ խորհուրդ և ասելիք ունի:

Սուսաննա Մուղնեցյան

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille
Par téléphone : 09.53.10.84.75, 09.51.36.49.21

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille
Հեռախոսներ՝ 09.53.10.84.75, 09.51.36.49.21

Responsable de publication en français : Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan, Jacqueline Kasparian
Traductions : Garik Galtyan, Karen et Karine Mkhitaryan

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Գարիկ Գալստյան, Ժակլին Կասպարյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի, Կարեն և Կարինե Մխիթարյանների

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում: